ՆՈՐ-ԴԱՐ

№ 110 ՏԱՍՆԵՒՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ, Չորեքշաբթի, 29 Յունիսի 1894 Չորեքշաբթի, 29 Յունիսի, ՏԱՍՆԵՒՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ, № 110

Տարեկան 10 րուբլի, վեց ամսով՝ 6 րուբլի, երեք ամսով՝ 3 րուբլի 50 կոպ.
Թիֆլիսում՝ ամսով՝ 1 րուբլի, հասով 5 կոպեկ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում մխիթարեան խանութում։

Խմբագրութեան հասցէն Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis. Rédaction „Nor-Dar“

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչեւ 2-ը
Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լրագիրների։
Յայտարարութիւնների յատուն 2 կոպ., իսկ մանրերի համար կրկնապատիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդ.—Մեր են առնում մեզ։
Քրոնիկոն.— Նոգենաի կործանումն։ Քաղաքային խորհրդի այսօրւայ նիստը։ Դպրոցական ուղեւորութիւն։ Պրամաճառների և գրքեր հրատարակողների համագումարը։ Արձակուած արձակուրդ։ Մեծ-Ղարաքիլիսայից։ Մասամբ գիւղից Ալէքսանդրապոլից։ Վլադիկաւկազից։ Ախալցխայից։
Նամակ խմբագրութեան։
Ընտրութիւններից։
Արիստակէս Ազիկոպոսին խմուած 100 ռուբլու պատմութիւնը։
Թղթակցութիւններ.—Փոտալի։
Քաղաքական.—Քաղաքական լուրեր։
Տաճն լուրեր։
Հեռագրեր։
Նամակ խմբագրութեան։
Բանասիրական. — Արխեստը Թիւրքահայերի մէջ։
Տեղական։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 28 յունիսի 1894 թ.

ՈՒՐ ԵՆ ՏԱՆՈՒՄ ՄԵԶ

Ընտրութեան անունով մեր եկեղեցիներում և նրանց շուրջը կատարուող անկարգութիւնների, այլանդակութիւններ .. ցոյցերիմասին մենք միմիայն ցաւելով կարող ենք խօսել։

Ամեն մի ընտրութեան մէջ մենք թոյլ ենք տալիս, որ կարող են տեղի ունենալ զեղծումներ երկու կողմից իսկ. մէկը կարող է անչափահաս լինել՝ կանոնով պահանջած տարիքը չունեցող, միւսը կարող է իրեն ծուխ համարել այն տեղ, որտեղ ինքը ծուխ չէ, մի երրորդը կարող է աւելորդ մի խօսք ասել և չեղուել ընդունուած կարգից, բայց այդ ամենի դէմ կարելի է բողոքել ուր հարկն է, և սխալն ուղղել, կարգից դուրս եկողին կարգի բերել, ապօրինի իրաւունք գործ դնողից այդ իրաւունքը խլել, և իրաւունքից զրկուածին իր իրաւունքը վերադարձնել... եթէ միայն ճշմարիտ ընտրութիւնն է լինում, և մարդիկ իշխանութիւնն ընդունում են, օրէնքը, մեծը և փոքրը ճանաչում են, երբ ընտրութեան համար դումարւում են, փոյթ չէ թէ այդտեղ մարդիկ միմեանց հակառակ կուսակցութեան են բաժանուած։

Բայց այն ամենը, ինչ որ մեր եկեղեցիներում կատարւում է, դա ամեն օրէնքից, ամեն կարգից դուրս բան է։

Այդտեղ ոչ իշխանաւոր կայ, ոչ ատորազրեալ, ոչ կանոնք, ոչ իրաւունք և ոչ պարտաւորութիւն։

Այդտեղ ասես մարդիկ հաւաքուել և ազատութիւն են ստացել ամեն կարգ և օրէնք ծաղրելու, հայհոյելու այն տեղը, որ տեղ գումարուել են, և անուանարկելու և անարգելու հոգևոր իշխանութիւնը։

Մենք հրաժարւում ենք մեր եկեղեցիներում գումարուող ժողովներին միտքներ իրաւական անուն տալուց և երկիւղով նայում ենք ապագային։

Այն ամենը, ինչ որ այժմս կատարւում է «ընտրութեան» անունով, անբարոյականացնում է ժողովրդին, անկարգութեան է վարժեցնում ամբոխին, մարդկանց և ընտանիքների մէջ պառակտումն է ձգում, ստորացնում է եկեղեցու և հոգևորականութեան նշանակութիւնը հասարակ ժողովրդի աչքում. այդ ժողովներում ամբոխը վարժւում է իրաւունքը հալածելու, օրէնքը ոտնակոխ անելու և իր եկեղեցական հաստատութիւնները ոտնակոխ անելու։

Ամեն մի ընտրութեան ժամանակ մենք ականատես ենք լինում, թէ ինչպիսի անկարգութիւններ են տեղի ունենում, ինչպիսի անարգանքներ են կատարւում եկեղեցու հոգևորականների հանդէպ։ Ամեն մի ընտրութեան ժամանակ մենք լսում ենք, թէ ինչպիսի անարգանքներ են կատարւում եկեղեցու հոգևորականների հանդէպ։ Ամեն մի ընտրութեան ժամանակ մենք լսում ենք, թէ ինչպիսի անարգանքներ են կատարւում եկեղեցու հոգևորականների հանդէպ։

ՆՈՐԱՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ ՈՂՋՈՅՆԱԿԱՆ ԿԱՄ ՏՈՒՆԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

100 ՌՈՒԲԼՈՅ ՊԱՏԻԺ ՎՈՒՃԱՐՈՂ

Մեր քաղաքում, մանաւանդ նրա շրջակայքում, շատ տարածուած է ձիերի վարակիչ հիւանդութիւնը, որ ամենից շատ զարգանում է գարնան ամիսներին։ Ամենից շատ ենթարկուում են այդ հիւանդութեան ձիերը, որոնք ունեցել են նոյն հիւանդութիւնը

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Ընկեր Ալեքսեյ Ալեքսեյի Նիկիտինի հարցերին պատասխանում է Ստալինը

Ինչպե՞ս է ընկերը գնահատում Ֆրանսիայի ներկայիս դրությունը։

Ստալին.— Ֆրանսիայի ներկայիս դրությունը կարելի է բնութագրել որպես ներքաղաքական ճգնաժամի սրման դրություն։ Ճգնաժամի սրումը պայմանավորված է նրանով, որ Ֆրանսիայի ներկայիս կառավարությունը՝ Բլումի կառավարությունը, ոչ միայն չի կատարում իր խոստումները, որ տվել էր ընտրությունների ժամանակ, այլեւ ընդհակառակը, գնում է ֆաշիստական ուժերի հետ համաձայնության։ Ֆրանսիայի ներկայիս կառավարությունը ոչ միայն չի ցանկանում ոտնահարել ֆաշիստական կազմակերպությունների գործունեությունը, այլեւ ընդհակառակը, ամեն կերպ պաշտպանում է նրանց

սրտաթիւնը։ Սկսուեց անձրեւը և ջրից թաւալած և փայլից ընկած դաշտերը իր կենդանարար կաթիլներով։

Դահարլեցի։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

Ոչքան ճիշտ է, յայտնի չէ, բայց հաղորդում են, որ Ֆրանսիայի հասարակապետութեան նոր նախագահ Կազիմիր Պերիէի կեանքի դէմ փորձ են արել։ Ընժամանակ, երբ Պերիէն կառքով գնում է եղել վերսալ, կառքի մօտ ուժեղ մի պայթիւն։

—Կարնոյի թաղման հանդիսին նախագահ է եղել մօտ $1^1/_2$ միլիոն հոգի։ Այդ հարիւր հոգի վնասուել են չոգեյից և ճնշումից. մի քանիսն ուղղակի ջարդուել մեռել են։

—Բերլինում ամբողջ մամուլը հաւանութիւն է տալիս այն բանին, որ վիլհելմ կայսրը Կարնոյի յիշատակին ներում է չնորհել Ֆրանսիացի երկու պատուաւորուած սպաների։ Սակայն այդ բանին քաղաքական նշանակութիւն չեն տալիս. ուստի այդ բանից քաղաքական ոչ մի հետեանք չեն սպասում Ֆրանսիայի և Գերմանիայի յարաբերութիւնների համար։ Պարիզի լրագիրները մեծ համակրութեամբ են խօսում Գերմանիայի կայսրի մեծահոգութեան մասին և մի քանիսը նկատում են, որ եթէ վիլհելմ կայսրն այժմ գնայ Պարիզ, նրա ճանապարհը կզարդարեն ծաղիկներով։

—Վիեննայից հաղորդում են, որ այնտեղ սուտ լուր էին տարածել, թէ յունիսի 17 ին կայսերական պալատում (Hotburg) չատ ռումբեր են գտնուած և այդ գիշեր ինչ-որ մարդ է ձերբակալուած։ Ցերեւի, պալատի մօտ ձերբակալել են մի մարդու, որ ասել է յունիսի 17-ի գիշերը պալատը յօդս պիտի ցնդի։ Ձերբակալութիւնից յետոյ իսկոյն խուզարկել են պալատի բոլոր սենեակները և կասածելի ոչինչ չեն գտել։

—Զինաստանն ու Եապոնիան եռանդով պինում են, որպէս զի հարկաւոր դէպքում պէնքի ուժով կարողանան վճռել իրենց վէճը թէ միայն խաղաղութեամբ հաստատութիւն կայացնելու հնարաւորութիւն չի լինել։ Վէճի առիթը ինչպէս յայտնի է, Կորէա թերակղզին է։ Սակայն վերջերս անգլիական լրագիրները հաղորդում են, որ այդ երկու պետութիւնները էլ համաձայն են միջնորդ դատարանով վերջացնել գործը։ Բայց խնդիրն այն է, որ դեռ չեն համաձայնութիւն կայացրել թէ որ պետութիւնն է միջնորդ դատարի դեր կատարելու. Զինաստանը ուզում է Իտալիան լինի միջնորդ, իսկ Եապոնիան—Անգլիային։

—Բորդոյի և Լիոնի հոգեւոր պետերը չոջաբերականներ են ուղարկել իրենց տէրին, որոնց մէջ յատագովում են հանդուցեալ Կարնոյին և ուրախութիւն յայտնում, որ նա վախճանեցաւ որպէս հաւատացեալ և կաթոլիկ եկեղեցու զաւակ։

—«Figaro»-ն հաղորդում է, որ մինչև այժմ Ֆրանսիայում ապրի հաշուով թագուհի են Պամբիատան 1883 թուին և Վիկտոր Հիւգոն՝ 1885 թուին։ Երրորդը Կարնոն էր։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կահաւորուած սենեակում։

—Ես ուրախութեամբ կըվարձէի այս սենեակը, բայց դժբաղդաբար գրասեղան չկայ։

Տան-տէրը.—ինչ անհնար. ձեզանից առաջ գրասեղան ոչոքի հարկաւոր չի եղել, իսկ այս սենեակում միշտ ուսանողներ են ապրել։

* *

Գործակատարը.—Ինչ էք կամենում, օրիորդ։

Պառաւ օրիորդը (աչքերը խոնարհեցնելով).—Ամուսնանալ։

* *

Տնտեսուհին։

—Ինչ էք կարծում, պ. պրոֆեսոր, ինչ չինեմ որդուս—բանաստեղծ թէ նկարիչ։

—Ի հարկէ բանաստեղծ, այժմ թատրերն անհամեմատ էժան է կատարից։

* *

Թչուառ սէր։

—Մայրիկ, խնդրեմ բացատրիր, ինչ է նշանակում «թչուառ» սէր։

—Թչուառ սէրն այն է, սիրելիս, երբ ջահել աղջիկը սիրում է անփող մարդու։

* *

Ամուսնական կեանքի օրացոյց։

Մեղրամիս.—պայծառ և խիստ տաք եղանակ։ Շոգ գիշերներ և լաւ օրեր։

Երկու ամսից յետոյ.—Զաւթաքաղի եղանակ։ Փոփոխական։ Զարգային երբեմն անձրեւ։

Երեք ամսից յետոյ.—Թիստ փոփոխական։ Մառախլապատ։ Անձրեւային։ Զարգային։ Որոտմունք։

Վեց ամսից յետոյ.—Անպիտան եղանակ։ Անձրեւ։ Սաստիկ որոտմունքներ։ Ցուրտ և մառախլապատ։ Սաստիկ անձրեւ։ Ցուրտ գիշերներ։

Մի տարուց յետոյ.—Սառնամանիքներ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԻՒՍԻՍԱԳԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԱՐԻԶ, 27 յունիս.—Սահմանեցին անչափահասների ոճրագործութիւնների օրինագծի հիմունքները։ Ցանցաւորները և ոճրագործութեան դրդիչները կըյանձնուեն ուղղիչ ատիկանութեանը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 յունիս.—Պերիէի նախագահութեամբ մինիստրների խորհրդի մշակած անչափահասներին վերաբերեալ օրինագիծը բաժանուած է չորս յօդուածի։ Առաջին յօդուածի մէջ ի նկատի են առնուած այն դէպքերը, երբ մամուլը կարող է մասնակցել ուղղիչ դատարանի. երկրորդ յօդուածը հաստատած է սահմանում պրոպագանդի դէմ. երրորդ յօդուածը սահմանում է, որ մի կամ աւելի տարի ժամանակով բանտարկութեան դատապարտուածները պէտք է առանձնակի բանտարկութեան ենթարկուեն և պատիժը կրելուց յետոյ անպայման կերպով պիտի աքսորուեն, չորրորդ յօդուածի զօրութեամբ անչափահասական գործերի դատաւարութիւնների հրատարակման համար յանցաւորները բանտարկութեան են ենթարկուում։

Զինաւորական դատարանն որդեթացրից գեներալ Եգոնին, որ անզգուշութիւնից գօրախաղի ժամանակ սպանել էր սպահ Շիֆմախերին։

ԼՕՆԴՕՆ.—Սեուլից հաղորդում են, որ Չեմուլնոյում դարձեալ ափ է իջեցրած 1000 հոգուց բաղկացած ճապոնական զօրք. Եապոնիայի ներկայացուցիչը յունիսի 3-ին նոր պահանջներ է արել։

ԲԵՐԼԻՆ.—Դաշնակցական խորհուրդը մերժեց եգիպտների դէմ օդենքի վերացման մասին եղած առաջարկը և հաւանութիւն տուեց Բաւարիայի կառավարութեան առաջարկը՝ թոյլ տալու, որ Գերմանիայի սահմաններում մուտք գործեն ռեդեմպտորիստները։

Խմբագիրը—հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԻԱՐ ՍՊԱՆԴԻԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Երկաթուղու գնացքներ։



Թիֆլիսից Բաթում գնում է մարդատար գնացքը առաւօտեան 9 ժամ 30 րոպէին, իսկ Բաթում հասնում է երեկոյեան 9 ժամ 45 րոպէին։ Պատային գնացքը երեկոյեան 6 ժամ 50 րոպէին. Բաթում հասնում է 8 ժ. 15 րոպէին։

Բաթումից Թիֆլիս գալիս է մարդատար գնացքը առաւօտեան 9 ժ. 40 րոպէին. Թիֆլիս հասնում է երեկոյեան 9 ժ. 55 րոպէին։ Պատային գնացքը գիշերը 11 ժ. 20 րոպէին, Թիֆլիս հասնում է ցերեկը 12 ժամ 25 րոպէին։

Թիֆլիսից Բագու գնում է պատային գնացքը ցերեկը 1 ժամ 10 րոպէին, Բագու հասնում է առաւօտեան 7 ժամ. 30 ր.։

Բագուից Թիֆլիս գալիս է պատային գնացքը գիշերը 11 ժ. 5 րոպէին, Թիֆլիս գալիս է երեկոյեան 5 ժ. 50 րոպէին։

Թիֆլիսից Գանձակ գնում է ապրանքակիր-մարդատար գնացքը երեկոյեան 7 ժամ 27 րոպէին, Գանձակ հասնում է առաւօտեան 7 ժ. 40 ր.

Գանձակից Թիֆլիս գալիս է ապրանքակիր-մարդատար գնացքը երեկոյեան 6 ժամին, Թիֆլիս գալիս է առաւօտեան 7 ժամ 35 րոպէին։

Թիֆլիսից Միխայլովո գնում է մարդատար-ապրանքակիր գնացքը ցերեկը ժամը 3-ին, Միխայլովո հասնում է երեկոյեան 7 ժ. 15 ր.։

Միխայլովոյից Թիֆլիս գալիս է ապրանքակիր-մարդատար գնացքը գիշերը 1 ժ. 30 ր. Թիֆլիս գալիս է առաւօտեան 8 ժ. 15 րոպէին։

Հետաքրքրական



Երթևեկութիւնը Բաթումի և Օզեսայի միջև մայիսի 8-ից սկսած.

—

ԲԱԹՈՒՄԻՑ ՕԴԵՍՍԱ ԳՆՈՒՄ Է չաբաթ գիշեր, ժամը 2-ին, չրջանառու գծով. հանդիպում է բոլոր նաւահանգիստները։

Երկուշաբթի գիշեր, ժամը 2 ին, չրջանառու ընթացքով, հանդիպում է բոլոր նաւահանգիստները։

Երեքշաբթի գիշերը, ժամը 2-ին չրջանառու ընթացքով, հանդիպում է բոլոր նաւահանգիստները։

Կիրակի օրերը, երեկոյեան $11^1/_2$ ժամին ճեպընթաց գնացքով, Նալչիկ և Սևաստոպոլի վրայով։

Հինգշաբթի, ցերեկը ժամը 12-ին, Նովոռոսիյսկի և Կերչի վրայով։

ՕԴԵՍՍԱՅԻՑ ԲԱԹՈՒՄ ԳԱԼԻՍ ԵՆ.

Կիրակի, երկուշաբթի, ուրբաթ օրերը, երեկոյեան չրջանառու ընթացքով։

Ուրբաթ օրերը, ճեպընթաց գնացքով։

Չորեքշաբթի առաւօտեան ուղիղ գծով։

Վոռոնցովի ընկերութեան գործակալութիւնը գտնում է Թիֆլ. Ազն. բանկի գալերէյում, №№ 117 և 118.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐԻՍ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑԻ

ԹՈՒՄՍԵՐԻՆ-ՀԱՅԵՐԻՆ ԲԱՆԿԱՐԱՆ

Ա. հատորի գինն է . . . . . 3 ր.
Բ. հատորինը . . . . . 4 »

Վաճառւում է Թիֆլիսի գրավաճառանոցում, Գոլովինակի պրոսպեկտ։

Դրամաճառներին 10% զեղչ։

10—10.

ՀԱՐԿԱՒՈՐ Է ՈՒՍՈՒՑԻՉ

Օրըստօր քաղաքի ծխական ուսումնարանին հարկաւոր է մի ուսուցիչ ռուսերէն և Հայոց լեզուի 500 րուբլի ռոճիկով։ Յանկացողը թող դիմէ հետեւեալ հասցէով՝ Армянскъ Тавр. губ. Попечителю армянск. приходск. Училища.

(604) 30—7

ԵՐԵՒԱՆԻ ԱՄԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՐԿՍԵՐՈՒ ԴՊՐՈՑՆԵՐԻ

Հարկաւոր են արտաքնաւոր ուսուցիչներ և ուսուցչուհիներ, կացարանները լիով գիմեն ինձ Թիֆլիսի Ս. Մարգոի վանքում առաւտեան ժամը 9—12.

Սահակ վարդապետ Բաղդասարեանց

(609) 3—2.

ԱՄԵՆԱՆԱՍԻ ՅԱՏԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑՈՂ

ԳԱՐԵՋԱՒԻՐ

Ռոստովի «**ԻԻԺՆԱԵՒ ԲԱՎԱՐԻԱ**» գործարանի ծախւում է քանակութեամբ Թիֆլիսում ԳՐԻԳՈՐ ԲԱՅԵՑԴՊԻՐԵԱՆՑԻ պահեստում ՊԻԼԶԵՆԻ և ԷՔՍՊՈՐՏԻ 60 22ի գինը 9 րուբլի առանց չիշերի անդուկի, իսկ չիշով և անդուկով 60 չիշը 13 ր. 25 կ.։ Օտարքաղաքի վաճառականները կարող են իրենց պահանջներով ուղղակի դիմել ինձ Тифлисъ Г. Я. Баяндурову.

(601) 10—7

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑՈՒՄ

առաջիկայ ուսումնական տարուայ համար բաց են՝ 5 դաս ուսումն. դրոց, 4—Հայոց պատմութիւն, 5—ընդհանուր պատմութիւն, 10—մաթեմատիկա, 7—Ֆրանսերէն, 4—բնագիտականուսումնք, 4—Ֆիզիկա, 4—տրամաբանութիւն և Հոգեբանութիւն, 6—Հայոց լեզու, 16—Աստուածաբանութիւն և վերակացութեան պաշտօն։

Պատգինն է 30—40 ր., վերակացութեանգինն է 150—200 ր., նայելով ցանկացողի ուսումնական ատիճանին և փափաքութեան։

Յանկացողները թող բարեհաճեն դիմել դպրանոցի հոգաբարձութեան մինչև յուլիսի 15-ը, ներկայացնելով իրանց ուսման և ծառայութեան թղթերը։

Գործավար՝ Մ. Տէր-Մարգսեանց՝

(608) 3—3

Մ. ԵՒ Ի. ՄԱՆԴԱԼ

Ա. Ա. ՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ

պատիւ ունի յայտարարելու ի գիտութիւն յարգ. Հասարակութեան, որ իւր Թիֆլիսում, Գոլովինակի պրոսպեկտի վրայ, Ամբոխմանեանի շինութեան մէջ գտնուած մագազինը վաճառել է իւր նախկին կառավարիչ պարոն ՍՏԵՓԱՆ ՌՈՍՏՈՄԵԱՆ **ԳՈՎԼԱԹԵԱՆԻՆ**, որ ներկայումս գործերը շարունակում է իւր ֆիրմայով և իւր սեպհական հաշուով, սոյն 1894 թուի յունիսի 1-ից սկսած։

Վերոյիշեալ Առևտրական Տունը պ. Թովմաթեանի հետ այլևս ոչ մի գործ ՉՈՒՆԻ

ՈՒՌԵՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ **Մ. ԵՒ Ի. ՄԱՆԴԱԼ**

(M.) 2—2

I, II և III ՓՈՂՍԱՒՈՒԹԵԱՆ 5 ՏՈԿՈՍԱՅԻՆ

ԽԱՂԱՏՈՄՍԵՐ

կարելի է ձեռք բերել վճարելով ամսական 5-ական րուբլի և աւելի բացատրելիս արտօնեալ պայմաններով գլխաւոր գործակալութեան մէջ, որ հիմնել է Կովկասի համար Պետերբուրգի **ՄԱՒՐԻԿԻ ՆԷՅ ԿԷՆ** բանկային տունը (գոյութիւն ունի 1863 թուից)։

Տոմսերի ապահովագրութիւն **75** *կոպ.*

ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ ԳՈՒՆԱԿԱԼՆԵՐ

Սերիաներն և №№-ը տրւում են իսկոյն և ետ։
(Ստացուած են նոր արտօնութիւններ)։
Գրասենեակը բաց է ժամը 9—2 և 5—8.
Գլխաւոր գործակալութիւնը գտնուում է Երևանեան հրապարակի վրայ, Թամամշեանների քարվանսարային կից նոր շինութեան մէջ։

(293) 30—27.

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET Cie

ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„Ն. ՊԱՔԷ ԵՒ ԸՆԿ.“

Կանոնաւոր և ուղիղ երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ չորեքշաբթի օրերը երկու չաբաթը մի անգամ, յունուարից սկսած և ԲԱԹՈՒՄԻՑ Յ ԱՐՍԷԼ։

Բաթումից Մարսէլ գնալիս մտնում է Տրապիզոն, Սամսոն և Կ. Պոլիս քաղաքները։

Բաթումից Պարիզ ուղիղ հաղորդակցութեան տոմսակները սովորական գիներին։

Բաթումից մեկնում է՝
Չորեքշաբթի՝ յունիսի 29 յունիսի 11 յուլիսի չոգենաւ «Մինդրելիական» «Փրեսիդէնտ» և այդպէս երկու չաբաթը մի անգամ չորեք. օրերը, ժամը 4-ին կէսօրուայ։ Տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել հետեւեալ գործակատարներին.

Բաթումում—պ. ՎԻԿՏՈՐ ԴԱՐՈՆՑԻՆ, Նաբերեժնայա։
Թիֆլիսում—պ. ԲԱՐԵԿԵՆԴԱՆԱՆԻՆ, Սիօնի փողոց, քարուանատան գէորգ աղայի։
Բաթումում—պ. Սամուէլ Դիլդարեանին, Կալիբեակինսկայա հրապարակ։
Նովոռոսիյսկում—պ. ԼՈՒԻ ՌԻՆՑՈՒԻՆ։

(262) 20—7

Тифлисъ. Дозв. Цензурою 28-го Іюня 1894 г. Типо-Лит. А. Меликъ-Шахназаріанца. Воронц. Набережн., д. Григорьянъ. Арм. Приход. Школы